ԻՆՖՈՐՄԱՑԻԱՅԻ ԱԶԱՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆ ՀԿ
ՀՀ, ք. Երևան, Բուզանդի 1/3, 4-րդ հարկ
Հեռ. 521775 #427, 099400840
FREEDOM OF INFORMATION CENTER NGO
1/3 Buzand street, 4th floor, Yerevan, RA

09.01.2012թ.
150-ի 8

Գլենդել Հիլզ ընկերության
գլխավոր տնօրեն Վահե Ալմոյանին

## Տեղեկատվություն ստանալու հարցում

Հարգելի պարոն Ալմոյան,

Ինֆորմացիայի ազատության կենտրոնին են դիմել Երեւան քաղաքի Արգիշտի 11/3 շենքի բնակիչները՝ տեղեկացնելով, որ պարբերաբար իրենց շենքի հարակից տարածքի հորատարերից կոյուղաջրեր են հոսում դուրս: Ինֆորմացիայի ազատության կենտրոնն այս կապակցությամբ դիմել է «Կենտրոն 1» համատիրություն եւ «Երևան ջուր» ՓԲԸ-ին, որտեղից ստավել է պատասխան, որ այդ հորատարերը դեռեւս պատկանում են Գլենդել Հիլզ կազմակերպությանը /կից ներկայացվում է նրանց գրությունների պատճենները/:

Ղեկավարվելով ՀՀ Սահմանադրության 27 և 27.1 հոդվածների և “Տեղեկատվության ազատության մասին” ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի դրույթներով՝ խնդրում ենք տրամադրել հետեւյալ տեղեկությունները.

1. Ե՞րբ են Արգիշտի 11/3 շենքի հորատարերը հանձնվելու համապատասխան մարմիններին:
2. Մինչ այդ գործընթացի իրականացումը, ու՞մ դիմեն նշյալ շենքի բնակիչները՝ կրկին անգամ այդ խնդիրը ծագելու ժամանակ::

“Տեղեկատվության ազատության մասին” ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի համաձայն՝ տեղեկություն ստանալու գրավոր հարցմանը պատասխան տրվում է այն ստանալուց հետո 5-օրյա ժամկետում: Ուստի, խնդրում ենք տեղեկություն ստանալու հարցումին պատասխանել օրենքով սահմանված ժամկետներում:

Կանխավ շնորհակալ եմ:

Նախագահ Շուշան Դոյդոյան